

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՐՍԱՆԻՔ

Համշէնցի հայերը սովորաբար 16—18 տարեկան ժամանակից են սկսում ամուսնացնել իրանց տղաներին: Համարեա նոյն հասակից են սկսում մարդու տալ և իրանց աղջիկներին, այնպէս որ մօտաւորապէս տղի ու աղջկայ հասակը մէկ է լինում: Սովորաբար աւելի տղի համար են շտապում, քան աղջկան: Մէկ որ՝ աղջկան համար շտապելու կարիք չկայ. ով լինի՝ կը տանի. առանց այն էլ աղջիկ քիչ կայ, գոնէ մեզ մօտ, Կովկասեան ափերում. միւս կողմից՝ աղջիկը մարդու գնալով, տան բանողի մէկը կը պակսի. իսկ այդ գիւղացու համար ոչ ցանկալու բան է, ոչ շտապելու: Եթէ չեմ սխալւում, ամուսնութեան հարցի մէջ, գոնէ ծնողների համար, այդ բանելու տեսակէտը առաջին դերն է կատարում: Ահա դրա համար է, որ աղջկայ համար այնքան չեն շտապում: Սովորաբար՝ եթէ մօտ հասակակից տղայ ու աղջիկ են ունենում, առաջ աշխատում են տունը հարս բերել և ապա աղջկանը մարդու տալ: Աղջիկը եթէ մի քիչ աւելի էլ մնայ, ոչինչ նրան երբ լինի, կը տանեն: Համարձակ կարելի է ասել, թէ ամբողջ Կովկասեան ափերում տանը մնացած, պառաւած աղջիկներ բոլորովին չկան. նոյն իսկ այրիներ չեն պատահում, հազուադիւս են նրանց մէջ, ուր մնան թէ ջահիլ աղջիկները: Տղի բանը ուրիշ է. գիւղացին մէկ-մէկ տարիներ է համրում, թէ երբ պէտք է ժամանակը գայ, որ իւր տղին պսակի, տան ու արտի գործերը մի քիչ թեթեւացնի: 16 տարեկան հասակն արդէն ժամանակ են համարում. 18 տարին հօ լաւ ժամանակ է, իսկ այնուհետև քանի գնայ, այնքան ժամանակը կանցնի: 23—25 տարեկան երիտասարդը նրանց մօտ ժամանակն անցած է համարւում և զժուար է հարս գտնում իւր համար: Այդ է պատճառը, որ

Նրանց մօտ շատ անգամ կինն աւելի է մեծ լինում, քան տղամարդը: Աերջին տարիներս միայն համշէնցի գաղթականների մէջ նկատուում է դրան հակառակ մի երևոյթ. հարուստ ու այրիացած համշէնցիները հետզհետէ աշխատում են փողի ու ժով՝ հակառակ հայրենաւանդ սովորութեան՝ ջահիլ աղջկերանց հետ պսակուել քաղքցիների պէս, որ նրանց համար բոլորովին խորթ բան է: Եթէ այս տեղերում չեն գտնում, կամ չեն տալիս, գնում են ուղղակի հայրենական ափերից վերցնում բերում իրանց հետ. ինչ խօսք որ աջ ու ձախ առատ-առատ կաշառքներ տալով գիւղի աղղեցիկ իշխաններին ու աղջկայ ազգականներին:

Աղջիկ առնելը համշէնցիների մօտ, շատ դժուարութիւնների հետ է կապուած. երկար բանակցութիւններ, սրան-նրան միջնորդներ գցել, բաւալան փողեր պէտք է փչացնել, մինչև որ կաջողուի աղջկայ ծնողներից համաձայնութիւն ստանալը: Այդպէս դժուար է եղել աղջիկ առնելը նոյն իսկ իրանց հայրենական ափերում, ուր, իրանց ասելով, այսպէս չէ, աղջիկ շատ է եղել, բայց էլի առանց կաշառքի ու նուէրների չէ անցել: Նեղ ու անճար մնացած տղի տէրը, տեսնելով որ չը պիտի կարողանայ իր ուզած աղջկան տանել, իր կողմը մարդիկ է գտնում և հարսների կամ երիտասարդների միջոցով փորձում է փախցնել աղջկան ուղղակի իր տունը, առաջուց հարսների բերանով նախապատրաստելով աղջկայ տրամագրութիւնը տղի օգտին և նրա կամքը առնելով: Աղջիկ փախցնելը նրանց մէջ շատ է պատահում. սովորական բան է նրանց համար: Հէնց որ աղջիկը տեսնում է, որ իր ուզածին չեն տալու իրան, կամ տեսնում է, որ ծնողները դեռ միտք չունին շուտով իրան մարդու տալու, անմիջապէս մօտենում, գտնում է իրան ուզող տղերանց կողմնակից հարսներին ու աղջիկներին, և մէկ օր, սովորաբար եկեղեցի գնացած ժամանակ, նրանց հետ միասին փախչում է ուղղակի իրան ուզողների տունը, ուր նրան սիրով ընդունում են և մինչև չքայտակեն, ինչ էլ լինի, եթէ սրով ու թրով էլ դան, դուրս չեն հանիլ: Աղջիկը տղի տունը գնալուց յետոյ՝ ամեն բան վերջանում է. այնուհետև բանը մնում է

միայն տէրտէրին. սա էլ գալիս պսակում է և այդպիսով խրնդիրը վերջանում է: Երբեմն այդ փախցնելու պատճառով ահագին ընդհարումներ են լինում. իրար վրայ են գնում, գէնքերը մէջտեղն են բերում և, եթէ կարողանում են, զօռով յետ են տանում փախչող աղջկան. իսկ եթէ ոչ, հօ աղջիկը գնում է ու մնում: Սովորաբար, վերջիվերջոյ, մի քանի ժամանակից յետոյ երկու կողմն էլ անցեալը մոռանում, հաշտւում են և իրար խնամութիւն անում:

Փախցնելու մի պատճառն էլ մասամբ աղջկայ տիրոջ կողմից պահանջուած դրամական վարձատրութիւնն է: Ճիշտ է, այս սովորութեան ամենքը չեն հետևում, բայց հետևողներն էլ քիչ չեն: Աւելի այդ սովորութիւնը կայ Տրապիզոնին մօտիկ զիւղերից եկած համշէնցիների մէջ. սովորաբար՝ նրանք առանց փողի աղջիկ չեն տալիս: Այդ փողը տրւում է աղջկայ տիրոջը, իբրև ժամանակաւոր աւանդ, մինչև մի-երկու տարի բանեցնելու համար, այնքան որ տոկոս տրուելու չէ դրանից: Բայց երբեմն էլ փողը ստացողը պարտք չի համարում վերադարձնելու, մանաւանդ որ այդ բանի համար երբէք դրաւոր պայմանաթուղթ չեն շինում: Իսկապէս՝ խնամախօսութեան ժամանակ այդ փողը տրւում է իբրև նուէր կամ աւելի ուղիղ՝ իբրև գին և ոչ իբրև փոխ: Բայց հարսը տանելուց մի-երկու տարի անցնելուց յետոյ, տղի տէրը կամաց-կամաց յիշեցնում է խնամուն իր տալիքը և եթէ վերջինը մերժում է, խնդիրը պահանջի ու զիւղական դատարանին է հասնում, որ սովորաբար վճիռ է կայացնում նրա օգտին:

Աղջիկ ընտրելիս ի նկատի են առնում արենակցութեան ու խնամութեան աստիճանները, իրանք առաջուց համրում, յետոյ մէկի միջոցով տէրտէրին հաշուել են տալիս՝ կըհասնի թէ ոչ: Սովորաբար այսքանը նկատել եմ, որ մեր այժմեան ընդունուած աստիճանների որոշումը նրանց միշտ շատ է երևում: Իրանց ասելով, հայրենիքում այսքան խիստ չի եղել: Կայ որ՝ տէրտէրից մերժում ստանալուն պէս, ուղղակի թողնում է միտքը դրածը և աշխատում ուրիշը գտնելու: Բայց պատահում են և այնպիսիներ, որ մտքում չնում են միայն իրանց հաւանա-

ծին առնելու: Գրա համար նրանք սկզբում փողի զօռ տալով, աշխատում են մի կերպ զործը գլուխ բերել, առատ-առատ բաժին հանելով ամենքին, ի հարկէ ամենից առաջ պսակող տէրտէրին: Եթէ չի լինում, ուղղակի փախցնում են: Փախածին պէտք է անպատճառ պսակել. այնպէս թողնելը աւելի «մեղք է». գոնէ այդպէս է ասում նրանց բարոյական աշխարհայեցողութիւնը և այդպէս էլ եղիլ է հայրենիքում: Թոնրի վրայ պսակի սովորութիւնը նրանց մէջ բոլորովին չկայ. իսկ սպորինի կնապահութեան դէպքերն էլ համարեա թէ չեն լինում:

Աղջիկ ընտրելու և ուզելու հոգացողութիւնը ամենից աւելի տղի հօր վրայ է թողնուած, ի հարկէ՝ մայրն էլ է խառնըւում, բայց աւելի կողմնակի միջնորդներին ասող, զրկողը հայրն է լինում: Առաջուց տղի յօժարութիւնը չեն հարցնում, բայց երբ իմանում են, որ տղան յօժար չէ, թողնում են: Կարելի է ասել, թէ առաջ աւելի աղջկայ յօժարութիւնն են հարցնում, քան տղին. ինչպէս առանց տղի, նոյնպէս էլ առանց աղջկայ յօժարութեան՝ ոչ մի պսակ չի լինում. անպայման հարցնում են: Ինչպէս տղի կողմից, նոյնպէս և աղջկայ կողմից սովորաբար բանակցողը հայրն է լինում. գլխաւորապէս ամենից առաջ նրա համաձայնութիւնն են աշխատում ստանալ: Նա շուտով խօսք չի կտրում. գնում-դալիս են, նոր-նոր միջնորդներ են դրում, մինչև որ վերջապէս խօսք է տալիս: Մինչև խօսք տա ր նա ժամանակ է գտնում խորհրդակցելու իր կնոջ ու մօտիկ ազգականների հետ տալու կամ չըտալու մասին:

Խօսքը կտրելուց չետոյ, օր են նշանակում (սովորաբար նոյն շաբթին). մի երեկոյ տղի հայրը կամ տէրը մի-երկու բարեկամի հետ պատրաստութիւնով գնում է հարսնացուի տունը, տանելով հետները մի ոչխար, դինի, մի քանի գաթայ և հետն էլ հինա՝ հարսնացուի ձեռքերին դնելու համար. այնտեղ գինիով ու «թօխիլիով» պաշտօնապէս կնքում են իրանց խնամութիւնը: Կերուխումին մի-երկու բարեկամ էլ աղջկայ կողմից է լինում: Տարած հինան տան կանայք գնում են աղջկայ ձեռքերին, իսկ վերջը նրանց բերած ու պարպած «հաբիղէն» դար-

սում են ընծայի համար պատրաստած աղջկայ կարած ու գործած շապիքներն ու նաշխուն ծաղկաւոր «եաղլուխները» և զրկում խնամոց տուն:

Այս նախապատրաստութիւնից մի քանի օր յետոյ սկսում են հարսանիքը: Պսակից ամիսներ ու տարիներ առաջ առանձին նշանդրէքի սովորութիւն համարեա բոլորովին չըկայ նրանց մէջ: Միայն նոյն առաւօտը, որ իրիկուն որ պիտի պսակը կատարեն, փեսացուի տէրը իր բարեկամներից մէկի ձեռքով զրկում է եկեղեցի կամ տէրտէրի տունը հարսի համար պատրաստած «հալաւներն» և մատնին՝ օրհնել տալու համար: Հալաւի հետ զրկում են մի կամ երկու խաշած հաւ, խմորեղէն, ձուածեղ, մի կամ երկու «խաչ-քաթայ», որ սովորաբար տէրտէրի համար է լինում, և մի «օխա» (շտօֆ) դինի: Հալաւ օրհնենքին ներկայ են լինում կամ անձամբ երկու կողմի խնամիները և կամ նրանց կողմից եկած բարեկամները: Օրհնելուց յետոյ նստում, ուտում են բերած հետեւիքը և ապա օրհնուած հալաւը զրկում նորահարսի տունը: Նոյն իրիկունը կատարում են պսակը և հարսանիքն էլ վերջանում է:

Հարսանիքի հանդէսը պսակի առաջին իրիկուանից են սկսում: Սկսելու առաջին նշանը հրացանի ձայնն է լինում: Այդ օրը վաղ առաւօտից տղի տէրը երիտասարդներ ու երեխաներ է զրկում գիւղի տները, և նրանցից ամեն մէկին բարակ մոմեր բաժնելով, հրաւիրում է նրանց հարսանիք: Երբեմն պատուաւորներին հրաւիրելիս, երեկոյեան դէմ «գաւուլ-գուռնի» ձայնով են դէմ գնում: Հրաւիրուածն էլ, եթէ ուզում է, մի բան է բաշխում նուագողներին, փող կամ «եաղլուխ» և կամ օղի հրամցնում և ապա «գուռնի» ձայնով գնում նրանց հետ փեսացուի տունը: Բոլոր ե/ւողներին ընդունում է տանտէրը միմի բաժակ գինի առաջարկելով:

Հարսը բերելուց առաջ «թագուորին» զարդարում են նորահարսի զրկած ծաղկաւոր «եաղլուխներով», նախապէս լողացնելով ու հագցնելով ամենալաւ շորերը: Լողացնողն ու զարդարողը քաւորն է լինում: Երեսն էլ նա է ածիւում. ինչքան է մաղ չունենայ, պէտք է էլի ածիլին երեսին դիպչի: «Եաղ-

լուխներից» մի երկուսը կախում են նրա կողքերից, մեկն էլ ձեռքն են տալիս, որ բերանը ծածկած պահէ: Այդպէս զարդարուած՝ «կնքարի» առաջնորդութիւնով գալիս ներկայանում է հանդիսականներին, համբուրելով նրանցից ամեն մեկի ձեռքը և ապա իր քաւորի հետ անխօս կանգնում պատի՝ տակ, ուղղակի գետնին, կամ մի տախտակի վրայ, սովորաբար արևելեան կողմը: Ոմանք էլ նստեցնում են, իսկ ունեւորները «թաքւորի» կանգնած կողմի պատը զարդարում են կարպետով:

«Թաքւորը» բերած ժամանակը այս երգն են երգում.

«Թաքւորի հայն *) ալ էրի իւ,

Խաչ էհօն ու,

Խաչ խաղաղութեան,

Խաչի սուրբ խաչի տէրունի,

Դեօլվաթն Աստրձմէ»:

Այսպէս երգում են ամեն մեկի համար, ում մօտ որ տանում, ներկայացնում են. նա էլ միքանի կոպէկ ընծայ է տալիս: Վանանց համար էլ ջոկ երգում են. նրանք էլ մի-մի «եաղլուխ», կամ օրհնէնք ու աչք-լոյս են տալիս: Երգով դովելը հին սովորութիւն է. հիմա շատերը չեն երգում: Դրանից յետոյ նստում հաց են ուտում:

Բոլորը մի սեղանի շուջը չեն բոլորւում, միքանի խմբերի են բաժանւում. դրանցից ամեն մեկի մէջտեղը դնում են թիւրքական ձևի կլոր սեղանը, կերակուրները վրան դարսած: Վանանց համար էլ ջոկ են տալիս: Հարսանիքի սովորական կերակուրները սրանք են. «բլղուր», փլաւ (իւղով կամ կաթով), «բարակ հաց» (բարակ բացուած, տապակած խմորեղէն), մսեղէն, մածուն, թան և վերջապէս միքանի հատ հաւ, մեղր ու կարագ՝ տէրտէրի ու պատուաւոր հիւրերի համար: Սովորաբար հարսնոց կերուխումներին ամենից աւելի պահանջներն անողներն ու «նագութուզ» ծախողները նորահարսի հետ եկած «հայսնախպերներն» են լինում. նրանց ամեն ուզած ուտելիքը պէտք է մօտ բերեն, թէ չէ կրճաղրեն, իսկ երբեմն էլ վէճ ու կռիւ կրսարքեն տանեցոց հետ:

*) Հայրն (կամ քեռին):

Անբուխումը վերջացնելուց յետոյ, եթէ եղանակը լաւ է լինում, դուրսը մի հարթ տեղ են ընտրում, «գուռնան» ւածել են տալիս և «դիպնուշ» (գօտեմարտ) են սարքում:

Հարսանիքն սկսած իրիկունից «դաւուլ-գուռնան» անբաժան է լինում նրանց հանդէսից: Սովորաբար գուռնաչին մէկն է լինում: Այն «գուռնի» մի տեսակն էլ, որ աւելի մեծ ձայն է հանում և աւելի սիրում են. նրան «բօրու» են ասում: Երբեմն «գուռնի» տեղ «քամանչա» ու «տիկ» են ւածում. այդպէս են անում աւելի Տրապիզօնի մօտերքից եկողները: Հարսանիքի ժամանակ երգած բոլոր խաղերն ու նուագները և գօտեմարտը - ասում ու կատարւում են թիւրքերէն խօսքով ու եղանակով: Խմբովին երգ կամ խաղ բոլորովին չեն ասում: Ասած կտորներն էլ սովորաբար՝ Ղարիբից, Քեօռօղլուց կամ Զահ-Իսմայիլից են լինում: Գօտեմարտն էլ թիւրքական ձևով ու ծէսով են կատարում՝ մերկ, առանց շապի, մինակ վարտիքը կամ «շալուարը» հագին: Առաջ միքանի բոպէ իրար բարեններ ու «թէ-մէնաններ» են տալիս, պտույտներ ու փորձեր են անում իրարից բռնելու, մենչև որ երկար իրար քաշքշելուց յետոյ, մէկին աջողում է միւսին մէջքի վրայ դրել. դա է համարւում յաղթութեան սլայմանը: Քցելուց յետոյ՝ յաղթողն իսկոյն վեր է բարձրացնում իր ախոյեանին և համբուլւում նրա հետ: Ապա երկուսը միասին, ձեռքները իրար ուսներին դրած, գալիս են ու մի ոտով ծունկ չոքում «աղաների» ու «իշխանների» առաջ և «բաշիիշ» պահանջում: Ստացած փողը կիսում են իրար մէջ, իսկ յաղթողը բացի դրանից, ստանում է նաև մրցանակ դրուած «եաղլուխը»:

Գօտեմարտը վերջացնելուց յետոյ, հալսնէն բազմութիւնը ձիերով ու հեւտակ, նուագողներին առջևը դրած, գնում են նորահարսի տունը, ամբողջ ճանապարհին սարերն ու ձորերը դղրդեցնելով հրացանի ու ուէփօլվէրի թնդիւններով: Մի քիչ ժամանակ էլ այնտեղ են անցկացնում, ուտում, խմում, զուարճանում, գօտեմարտ են սարքում, մինչև որ նորահարսին զարգարում, դուրս են բերում, դնում ձիու վրայ: Այդ ժամանակ սկստալը կամ տղի տէրը նրա վրայ միքանի սև փող է շաղ

տալիս. մօտիկ եղույնները խլխլելով հաւաքում են զետնից: Իսկ իրան վզից էլ հարսի տնից բերուած մի երկայն «եաղլուխ» էն կապում: Դրանից յետոյ բազմութիւնն ուղղւում է կամ դէպի եկեղեցին և կամ «թաքւորի» տունը, նայելով թէ որտեղ է լինելու պաակը: Սովորաբար պաակը տանն են կատարում. իսկ երբեմն լաւ եղանակին, մանաւանդ երբ միւսնոյն օրը ուրիշ պաակուողներ էլ են լինում, բոլորին միասին բերում, լըցնում են եկեղեցին. զոյգերը իրար մօտ կանգնեցնում և մէկ անգամից բոլորին պաակում: Տանն են պաակում, թէ եկեղեցում — ոչ մի դէպքում «թաքւորին» նորահարսի տունը չեն տանում. նրան մենակ թողնում են տանը՝ իր քաւորի հետ, մինչև հարսը կրքերեն: Եկեղեցում պաակուած ժամանակն էլ «թաքւոր» մենմենակ իր քաւորի հետ է դնում եկեղեցի. սոյնտեղ սպասում մինչև նորահարսի գալը:

Վերջապէս նորահարսն առնում, զալիս են եկեղեցի: Առջևից ու յետևից ձիով կէսմ ոտով նրան ուղեկցում են իր քոյրերն ու եղբայրները կամ նրանց փոխարէն, մօտիկ բարեկամ հարսներ ու երիտասարդներ — «հայսնքոյրներ» ու «հայսնախպարներ». իսկ նրա ձիու կողքերից ու առջևից մարդիկ են դնում հարսին ու նրա ձիու սանձը բռնելու, որ չըլինի թէ վայր ընկնի, որովհետև գլխին երկայն քօղ է ունենում զցած («բիւրիւղ»): Եկեղեցում քաւորը ձեռքին ոչինչ չի բռնում. այնքան որ մօտը կանգնում է և կատարում է քահանայի առաձները: Թուրը բռնելու և կամ գլխին թագ դնելու սովորութիւնը բոլորովին չըկայ. միայն աբրէշումէ կարմիր ոլորած թելից նարօտ են կապում երկուսի գլխներին, որ կամ անմիջապէս պաակից յետոյ և կամ յաջորդ օրը, չորեքշաբթի կամ ուրբաթ չ'եկած վերացնում են: Խորհուրդը կատարելուց յետոյ, առաջուան հանդէսով, նուազով ու հրացանների ձայնով շտապում են դէպի «թաքւորի» տունը: Հասնում են սուռն. դեռ հարսին ձիուց վայր չառած, դրսից կանչում են. «Ի՛նչ բաշխիշ տաք պիտի հայսին»: Բերում են մի պղնձէ աման. հարսի ոտը ասպանդակից միքիչ վեր վերցնում ու դնում են ամանը նրա ոտի տակին: Իսկոյն հարսնեղբայրները մէջքի դանա-

կով Յ տեղից միքիչ խազում են ամանը. իսկ իրանց էլ մի-մի «եաղլուխ» ընծայ են տալիս: Մտնում են ներս. հարսին կանգնեցնում են դռան յետևը, «թաքւորին» էլ մօտը: Տունը մըտնողի ձեռքը հարսը պիտի համբուրէ: Նորից շարունակում են առաջի իրիկուան հանդէսը. ուտում, խմում են, խաղ են կանչում, պարում են և զանազան հանաքներ ու խաղեր են սարքում մինչև լուսանալը, երբ արդէն ամենքը ցրւում, գնում են իրանց բանին ու գործին: Նրանց ցրուած օրը աշխատում են դրսից, հարևաններից փոխ բերած ամանները, գդալներն ու սարքը տէրերին վերադարձնել. ինչ որ մնում է, չեն կարողանում տալ, պահում են մինչև Յ օր. միւս օրը չեն տալիս, որ չըլինի թէ վնասի հանգպեն, հարսը տնից բաժնուի: Հարսը մի երեք օրի չափ կրում է գլխի վրայի «բիւրիւզը». մի շաբաթի չափ էլ ցերեկները դռան յետևը կանգնած՝ համբուրում է ներս ու դուրս մտնողի ձեռքը. մի երեք շաբաթի չափ, ամեն իրուկուն լուանում է բոլոր տնեցոց ոտները, իսկ մինչև միքանի ամիս անցնելը, ուրիշների մօտ չըխօսքանութիւն է անում, խօսքի չի խառնւում, իր համար սուս ու անխօս կանգնում է պատի տակին: Ոտները առաջին անգամ լուացած ժամանակը, տնեցիք փող են բաշխում հարսին:

Հարսանիքից մի շաբաթ անցած, «մուրէհուր» են գալիս. այն է՝ նորահարսի ծնողները գալիս են փեսի տունը, հետները բերելով տանը մնացած հարսի մանրունք բօները, նրա հին զգեստները, «ռօկը», դանակը, մկրատը և այլն: Այդ իրիկուն էլ փեսի տանը խնջոյք-ուրախութիւն են սարքում: Նորահարսը բոլոր եկողների ոտները լուանում է և նրանցից միքանի կուպէկ ընծայ ստանում: Գրանից մի-երկու շաբաթ յետոյ էլ սկեսրայրը կամ տան մեծը՝ հարսին տանում է մարանց հիւր: Այն իրիկուն էլ այնտեղ են ուրախութիւն անում և միւս օրը նորից դառնում իրանց տեղը:

Սովորաբար հարսանիքին աղջկայ կողմից շատ քիչ ծախս է լինում. համարեա ոչինչ: Նրանք աղջկայ համար ոչ միայն օժիտ ու փող չեն տալիս, այլ դեռ իրանք են ստանում փեսի կողմից: Ծախսերի ամենամեծ մասը պսակն աջողցնելու համար

աջջկայ հօր կամ տիրոջն ու նրա բարեկամներին տուած կաշառքներն են լինում, որ երբեմն երեք հարիւր լուբլու է հասնում: Այնուհետև ահագին փող է նստում նորահարսի համար պսակի հագուստ կարել տալը: Ոտնամանից, գուլպայից, գլխի ֆէսից, շապից ու վարտիքից սկսած մինչև վրայի հագնելիքն ու զարդերը—բոլորը տղի տիրոջ վրայ է, նա պէտք է առնէ ու կարել տայ. բոլորը, բացի շապից, աբրէշում, ատլաս, դումաշ ու չուխա պէտք է լինի: Ամենաքիչը 50—60 լուբլի միայն դրա վրայ է գնում, եթէ զարդերն էլ չլինին: Սրանք մի կողմից. հարսանիքին նորահարսի տանը պատրաստուած բոլոր ուտելիք-խմելիքն փեսի կողմից է ղրկւում. մինչև չ'ղրկեն, չեն պատրաստիլ: Խօսքը կտրած ժամանակն էլ «թօխլին» ու գինին և քահանային ու աթոռահասը՝ նա է տալիս: Եթէ նոյն իսկ ընդունենք, որ աղջիկ ուղելու ժամանակ՝ առանց դժուարութիւնների գործը շուտով գլուխ է գալիս, ոչ ոքի նուէր ու կաշառք չի տրւում, որ շատ դժուար կրպատահի, էլի միմիայն ուտել-խմելու, հագուստի ու քահանայի ծախս կրնասի միջակ հաշւով ամենաքիչը 150-200 լուբլի: Ահա գլխաւոր ծախսերի հաշիւը մօտաւորապէս.

1 ջուալ ցորենի սպիտակ ալիւր	.	.	8 լուբլի.
1 ջուալ բրինձ	.	.	10 „
1 երինջ, աչառ կամ կով	.	.	20 „
10 օխա իւղ	.	.	10 „
Գինի և օղի	.	.	25 „
Խօսքը կտրած ժամանակ՝			
«Թօխլիի և գինու ծախս	.	.	10 „
1 ձեռք շոր իր համար	.	.	15 „
Նորահարսին հալաւ	.	.	60 „
Քահանային և աթոռահաս	.	.	15 „

Գումարն է՝ 173 լուբլի: